ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2023 ԹՎԱԿԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ժամը 20:00 դրությամբ

Հ/Հ	Աղբյուրը	Վայր		Ներկայացված փաստը	Փաստի հավաստիությունը	Ում հետ է ճշտվել փաստը	Պարզաբանում կամ ձեռնարկված միջոցառում
		ԸԸՀ	Ընտրական տեղամաս				
	vesti.am | Մի շարք տեղամասերում արդեն իսկ խախտումներ են արձանագրվել	8	3	8/3 տեղամասում ընտրողների ցուցակները փակցված են անհասանելի տեղում:	չի համապատասխանում իրականությանը	թիվ 8/3 ՏԸՀ քրտուղար	ցուցակները փակցված են պատուհաններին և մատչելի են ընտրողների և ընտրական գործընթացի մասնակիցների համար
	Քաղաքացու անձնագիրը սարքը չի ընթերցել. Ավետիք Չայաբյանը պահանջում է արձանագրություն կազմել | Armlur – Լուրեր Հայաստանից	9	42	Սարքը չի ընթերցել ընտրողի անձնագիրը	համապատասխանում է իրականությանը	թիվ 9/42 ՏԸՀ-ում սարքավորումը սպասարկող մասնագետի և 9/42 ՏԸՀ նախագահի հետ	Ընտրողին խնդրել են ներկայացնել նույնականացման քարտը: Ժամը 12:41-ի դրությամբ ընտրողը քվեարկել է
	Հեռախոսազանգ	2	43	Թեկնածուն եկել է ընտրական տեղամաս, մոտեցել է քարտուղարին և ասել, որ իրեն գրանցեն	Համապատասխանում է իրականությանը	Թիվ 2/43 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հետ	Ընտրական օրենսգիրքը հստակ սահմանել է ընտրական հանձնաժողովի նիստերին, քվեարկության ամբողջ ընթացքում քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց, որոնց թվարկը տրված է Ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 11-րդ մասում: Դրանք են՝ վստահված անձինք, դիտորդները, ԶԼՄ ներկայացուցիչները, այցելուները, ինչպես նաև վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները: Ինչ վերաբերում է թեկնածուներին, ապա Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ բացի ընտրական հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանցից, քվեարկության արդյունքների ամփոփման նիստին ներկա գտնվելու իրավունք ունի նաև թեկնածուն: Հետևաբար, թեկնածուն քվեարկության ընթացքում ներկա գտտվելու իրավունք չունի, նման իրավունք ընտրական օրենսդրությամբ թեկնածուին վերապահված է միայն քվեարկության արդյունքների ամփոփման նիստին՝ ժամը 20:00-ից հետո:

	Ականատես. Արձանագրվել է երկու դեպք, երբ չհրկիզվող պահարանը մինչև ՏԸՀ նիստը արդեն իսկ բացված է եղել - Պանորամա | Հայաստանի նորություններ (panorama.am)	6,10	3,43	թիվ 6/3 և 10/43 տեղամասային կենտրոններում չհրկիզվող պահարանները մինչև 07:00-ի նիստն արդեն բաց են եղել	իրականությանը համապատասխանում է մասամբ:	թիվ 6 և 10 ԸԸՀ նախագահների և թիվ 6/3 և 10/43 ՏԸՀ նախագահների հետ	թիվ 6/3 ՏԸՀ նախագահը հերքում է չհրկիզվող պահարանը բացել է ՏԸՀ 7:00-ի նիստի ժամանակ՝ օրենքով սահմանված կարգով: Թիվ 10/43 ՏԸՀ նախագահը պարզաբանել է, որ օրենքով սահմանված կարգով ոստիկաններից ընդունվել է փակ վիճակում գտնվող չհրկիզվող պահարանը, քանի որ պետք է անցկացվեր վիճակահանություն, որի համար օգտագործվող թերթիկները պետք է վերցվեին ՏԸՀ անդամների ուղեցույցներից, որոնք գտնվում էին չհրկիզվող պահարանում, ուստի մինչև 7:00-ի նիստի մեկնարկը չհրկիզվող պահարանը բացվել է, որից հանվել են ՏԸՀ անդամների ուղեցույցները:
	«Ականատես» դիտորդական առաքելություն | Facebook	8		8/6, 8/7, 8/8, 8/9, 8/10, 8/12 տեղամասերում ընտրական ցուցակները մատչելի չեն քվեարկության նախորդ օրը իրենց անունը ցուցակում փնտրել փորձող քաղաքացիների համար, դրանք փակ դարպասների հետևում են	իրականությանը չի համապատասխանում	թիվ 8 ԸԸՀ նախագահի հետ	թիվ 8 ԸԸՀ անդամները շրջել են նշված տեղամասերով, բոլոր տեղամասերում ցուցակները մատչելի են եղել քվեարկության նախորդ օրը, քանի որ տեղի են ունեցել ՏԸՀ նիստերը և տեղամասային կենտրոնը մինչև ուշ երեկո (մինչև ոստիկանությանը հանձնելը) բաց է եղել բոլորի համար:
	հեռախոսազանգ	10	11	Ապրելու երկիր կուսակցության վստահված անձին թույլ չեն տվել սարքից նայի մասնակցների թիվը	հավաստի չէ	10/11 նախագահի հետ	վստահված անձը տեղեկացված
	Հեռախոսազանգ	7	44	Անձը ՌԴ քաղաքացի է, ցուցակում հաշվառվել է, սարքը չի նույնականացրել անձը չի քվեարկել	հավաստի է	տեղեկությունն հայտնել է 7/44 նախագահը	քաղաքացին հեռացել է՝ չսպասելով խնդրի լուծմանը
	զանգ	7	52	ընտրողը ցուցակում կա, անձնագիրը վավեր է մինչև 2030թ, սարքը դեղին լույս է վառում, տեղեկանք են պահանջում	համապատասխանում է իրականությանը	7/52 նախագահի հետ	քաղաքացուն խնդրել ենք մոտենալ տեղամաս՝ մասնագետը ԱՀՓ տվյալները ձեռքով անցկացրել է, քաղաքացին քվեարկել է
	«Հայաքվե» դիտորդական առաքելության կողմից ընտրատեղամասերում արձանագրված խախտումները՝ ժամը 10:30-12:15-ի դրությամբ (168.am)	8	60	8/60 հանձնաժողովի նախագահը ծրարը պատռել և նետել է աղբարկղը:	Համապատասխանում է իրականությանը	8/60 տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղար Հասմիկ Մխիթարյան	Ծրարը վնասված է եղել, տպագրական խնդիր է եղել և, որպեսզի, ընտրողին չտրամադրվի, տեղամասային ընտրական հանձնաժողովը մարել է տվյալ ծրարը:

	«1/3 տեղամասում հանձնաժողովի նախագահն իրեն պահում է ոչ կոռեկտ». Ռադիկ Ավետյան | ՄԱՄՈՒԼ.ամ - Նորություններ Հայաստանից, Արցախից (Լեռնային Ղարաբաղ) և աշխարհից (mamul.am)	1	3	Նախագահն ուղղորդում է ընտրողներին	Չի համապատասխանում իրականությանը	1/03 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արփինե Ավետիսյան, հանձնաժողովի անդամներ Վարդան Մակինյան, Կամո Փիրոյան	
	20 տեղամասերում ընտրության գաղտնիության խախտման հետ կապված դեպքեր են արձանագրվել. «Անկախ դիտորդ» (news.am)	6,9	6/13, 9/56, 9/57, 9/6	Պարբերաբար նկատվել են ուղղորդման դեպքեր ՔՊ կուսակցության կողմից	Չի համապատասխանում իրականությանը	6/13 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Անահիտ Իսոյան, քարտուղար՝ Տիգրան Երանյան, թիվ 9/6 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արմինե Փափազյան, Արթուր Միքայելյան, 9/56 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Աշոտ Ծադունց, թիվ 9/57 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արմեն Մուշեղյան	
	զանգ. Հանրային ձայն	7	1	քվեատուփը չի երևում տեսախցիկի տեսադաշտում	հավաստի է	ՏԸՀ նախագահի	ձեռնարկվել են միջոցներ՝ կարգավորելու խնդիրը, քվեատուփը տեղափոխվել է տեսանելի դաշտ
	Հեռախոսազանգ	7	44	Անձը ՀՀ քաղաքացի է, ցուցակում հաշվառվել է, սարքը չի նույնականացրել անձը չի քվեարկել	հավաստի է	տեղեկությունն հայտնել է 7/44 նախագահը	տեխնիկական սարքավորումների աջակցման կենտրոնին դիմելուց հետո պարզվեց, որ քաղաքացին արդեն քվեարկում է տվյալ պահին, խնդիրը կարգավորված է
	Հանցագործության մասին 2 հաղորդում ենք ներկայացրել. Ընտրողների են տեղափոխել եւ դիտորդին են խոչընդոտել. «Անկախ դիտորդ» | Irakanum.am	6	25	6/25 տեղամասում հանձնաժողովի նախագահը դիտորդին թույլ չի տվել դիտարկել, թե քվախցիկների ներսում օգտագործված քվեթերթիկներ արդյոք կան, թե չկան	իրականությանը համապատասխանում է մասամբ:	ՏԸՀ նախագահի և քարտուղարի հետ	Նախագահը թույլ չի տվել դիտորդին գտնվել քվեախցիկի ներսում, քանի որ կողմից քվեախցիոկւմ առկա է եղել ընտրող: Ընտրողների բացակայության ժամանակ նախագահն ու քարտուղարը դիտորդին ուղեկցել են քվեախցիկի ներս, պատասխանել վերջինիս հարցերին և պարզաբանել, թե ինչ կանոններով են այնտեղ լցվում քվեաթերթիկներ և դատարկվում քվեախցիկներում առկա արկղները:

	Կուտակումներ են արձանագրվել 18 տեղամասերի շրջակայքում, 4 դեպքում դրանք իրականացվում էին ՔՊ վստահված անձանց մասնակցությամբ. «Անկախ դիտորդ» - ՓԱՍՏԻՆՖՈ | Իրավական լուրեր, իրադարձություններ, վերլուծություններ, տեսանյութեր (pastinfo.am)	4	45	4/45-ում դիտորդներն արձանագրել են, որ հանձնաժողովի նախագահը կապի մեջ է ՔՊ շտաբի հետ, հաղորդակցվում է վստահված անձանց և ընտրողների հետ	Չի համապատասխանում իրականությանը	4/45 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Ալիտա Սարդարյան, քարտուղար Էդգար Սարգսյան	
	https://mamul.am/am/news/275379	2	24	"Լրատվամիջոցներում լուսանկար է տարածվել, որտեղ նշվում է, որ Նոր Նորքի թիվ 2/24 ընտրատեղամասում բացահայտ քարոզչություն և ուղղորդում է իրականացվում ՔՊ-ի թեկնածուի օգտին:"	չի համապատասխանում իրականությանը	թիվ 2/24 ՏԸՀ նախագահ	Պարզվել է, որ քվեաթերթիկ և ծրար տրամադրող հանձնաժողովի անդամի աշխատասեղանին փակցված է "Քվեաթերթիկ 2" ցուցանակը, որը ԿԸՀ 11.01.17թ. թիվ 7-Ն որոշման համաձայն՝ մատնանշում է այն գործառույթը, որը պետք է իրականացնի տվյալ աշխատասեղանի մոտ նստած հանձնաժողովի անդամը:
	Կուտակումներ են արձանագրվել 18 տեղամասերի շրջակայքում, 4 դեպքում դրանք իրականացվում էին ՔՊ վստահված անձանց մասնակցությամբ. «Անկախ դիտորդ» - ՓԱՍՏԻՆՖՈ | Իրավական լուրեր, իրադարձություններ, վերլուծություններ, տեսանյութեր (pastinfo.am)	4	20	4/20 տեղամասում արձանագրվել է դեպք, երբ 2 ընտրող միաժամանակ քվեարկում են մեկ քվեախցիկում, իսկ հանձնաժողովի անդամը քվեախցիկ է մտնում և ցուցումներ տալիս:	Մասամբ է համապատասխանում իրականությանը	Թիվ 4/20 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Աշոտ Հարությունյան	Երկու ընտրող մտել են քվեարկության սենյակ և միասին մոտեցել են քվեարկության խցիկին: Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը նկատել է, մոտեցել և ապարազաբանել է երկու ընտրողներին, որ քվեարկության խցիկում միաժամանակ երկու ընտրող գտնվել չի կարող, եթե ընտրողը օգնողի միջոցով չի քվեարկում և նախապես տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում չի գրանցվել: Դրանից հետո խնդիրը կարգավորվել է:

	Հեռախոսազանգ	1	12	Ազգային առաջընթաց կուսակցության վստահված անձը խոչընդոտում է հանձնաժողովի աշխատանքներին, թույլ չի տալիս, որպեսզի ընտրողների ցուցակի մոտ նստած հանձնաժողովի անդամն ընտրողների ստորագրություններով հաշվի քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը	Համապատասխանում է իրականությանը	Թիվ 1/12 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Նարեկ Ստեփանյան, թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամներ	Ընտրական օրենսդրությունը սահմանում է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովները երեքժամյա պարբերականությամբ քվեարկության մասնակիցների թիվ են հայտնելու ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ, իսկ քվեարկության մասնակրցների թիվը հանձնաժողովը հաշվում է ընտրողների ցուցակում դրված ստորագրություններով: Վստահված անձը խոչընդոտելով հանձնաժողովի աշխատանքներին, թույլ չի տվել, որպեսզի տեղամասային հանձնաժողովի անդամը հաշվի ընտրողների ստորագրությունները: Թիվ 1/12 տեղամասային ընտրական հանձնաժողով այցելել են նաև թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամները, պարզաբանել են ընտրական օրենսդրության կարգավորումները, որից հետո խնդիրը կարգավորվել է:
	Հեռախոսազանգ	6	16	ընտրողների ցուցակները մասամբ են փակցված	հավաստի չէ	ՏԸՀ Նախագահ	բնակիչները չեն կարողանում գտնել, նախագահի խնդրանքով ուղղորդվել է քաղաքացին մոտենալ տեղամաս և նախագահի օգնությամբ գտնել ընտրական ցուցակում համապատասխան անունները
	ՄԻՊ գրասենյակ	2	28	քաղաքացին ներկայացել է քվեարկության անձնագրով, որը ստացել է քվեարկության օրվանից 10 օր առաջ, որի տվյալները ներառված չեն եղել տեխնիկական սարքավորման մեջ ներմուծված տվյալների բազա: Ընտրողը ներկայացրել է նաև անձը հաստատող անվավեր փաստաթուղթ, որի փոխարինման վերաբերյալ տեղեկանքը չի ներկայացվել: Ընտրողին խնդրել են ներկայացնել այդ տեղեկանքը:	համապատասխանում է իրականությանը	թիվ 2/28 ՏԸՀ նախագահի, նույն ՏԸՀ-ում տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի և ընտրողի հետ	ժամը 18:45-ի դրությամբ ընտրողը քվեարկել է:
	PressMedia.am | 2/21 ընտրատեղամասում քվեարկությունը սկսվել է 1 ժամ ուշ	2	21	Քվեարկությունն սկսվել է ավելի քան մեկ ժամ ուշ՝ առավոտյան 8:00-ի փոխարեն 9:00-ին	Չի համապատասխանում իրականությանը	Թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Մարատ Սևոյան	

	Aurora News | ՏԵՍԱՆՅՈՒԹ. Ընտրատեղամասերից մեկում մարդիկ իրար հրմշտել են. «Ականատես» դիտորդական առաքելություն	9	2	9/2 տեղամասում նկատվել է հրմշտոց	Համապատասխանում է իրականությանը	Տիվ 9 ԸԸՀ նախագահ	ընտրողը ներկայացել է ոչ սթափ վիճակում, գրանցվել է տեխնիկական սարքավորման միջոցով, ստացել է քվեարկության կտրոն, այնուհետև գրացվել է ընտրողների ցուցակում, ստացել է ծրար և քվեաթերթիկներ, քվեարկել է քվեախցիկում, մոտեցել է քվեատուփին և երբ նրանից պահանջել են կտրոնը, բողոքել է, որ իր լուսանկարով փաստաթուղթն իր ձեռքից վերցրել են: Հանձնաժողովի անդամներն ապահովել են, որ ընտրողը տրամադրի կտրոնը և, քվեարկությունը կատարելով, դուրս գա տեղամասից: Քանի որ ընտրողն աղմկում էր և չէր ցանկանում ենթարկվել, ներս են հրավիրվել ոստիկաններ, ովքեր ընտրողին ուղեկցել են դուրս: